

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

2020/2021 ուսումնական տարի

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԱՌԱՐԿԱՅԻ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. Միջազգային հանրային իրավունքի հասկացությունը, առանձնահատկությունը և սոցիալական բնույթը:
2. Միջազգային հանրային և միջազգային մասնավոր իրավունք հասկացությունները և նրանց հարաբերակցությունը:
3. Միջազգային հանրային իրավունքի ծագումը և զարգացման պատմական փուլերը:
4. Միջազգային հանրային իրավունքի նորմերի ստեղծման գործընթացը: Ունիվերսալ և տեղական նորմեր, իմպերատիվ և դիսպոզիտիվ նորմեր:
5. Միջազգային հանրային իրավունքի աղբյուրները: Միջազգային պայմանագիր, միջազգային սովորույթ:
6. Միջազգային հանրային և ներպետական իրավունքի փոխազդեցությունը և փոխներգործությունը:
7. Միջազգային հանրային իրավունքի սուբյեկտի հասկացությունը և տեսակները:
8. Միջազգային իրավասուբյեկտության բովանդակությունը: Միջազգային իրավունակության և գործունակության առանձնահատկությունները:
9. Պետությունը որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտ: Պետական ինքնիշխանության հասկացությունը և հատկանիշները: Բարդ պետությունները և միջազգային իրավունքը:
10. Իրենց անկախության համար պայքարող ազգերի և ժողովուրդների միջազգային իրավասուբյեկտության առանձնահատկությունները: Ինքնորոշման իրավունքի իրականացման միջոցները:
11. Միջազգային միջպետական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը: Նրանց իրավասուբյեկտության աճանցյալ բնույթը:
12. Պետությունների ճանաչումը և դրա տեսակները:
13. Կառավարությունների, պատերազմող և ապստամբող կողմի, դիմադրության կազմակերպության ճանաչումը:
14. Պետությունների իրավահաջորդությունը: Իրավահաջորդության առաջացման հիմքերը: Իրավահաջորդության տեսակները:
15. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների հասկացությունը և դասակարգումը:
16. Պետությունների ինքնիշխան իրավահավասարության սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
17. Ուժ և ուժի սպառնալիք չկիրառելու սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
18. Վեճերը խաղաղ լուծելու սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
19. Պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
20. Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը. սահմանների անխախտելիության սկզբունքը, հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
21. Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:

22. Պետությունների համագործակցության սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
23. Մարդու իրավունքների և ազատությունների հարգման սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
24. Միջազգային պարտավորությունները բարեխիղճ կատարելու սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
25. Շրջակա միջավայրի պահպանության սկզբունքը. հասկացությունը, զարգացումը և բովանդակությունը:
26. Միջազգային պայմանագրերի իրավունքը, նրա աղբյուրները և կոդիֆիկացիան: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիան:
27. Պայմանագրեր կնքելու իրավունակությունը: Պայմանագրի կողմերը: Պայմանագիրը և երրորդ պետությունը:
28. Պայմանագրերի կնքում: Լիազորություն: Պայմանագրերի կնքման փուլերը:
29. Վերապահումները և նրանց իրավաբանական հետևանքները: Հավելվածները և նրանց իրավաբանական ուժը: Պայմանագրի ուժի մեջ մտնելը և դրա հետևանքները:
30. Պայմանագրերի ձևը և կառուցվածքը: Պայմանագրի անվանումը և լեզուները:
31. Պայմանագրերի մեկնաբանությունը:
32. Պայմանագրերի դադարեցումը: Պայմանագրի կասեցման հիմքերը: Պատերազմի ներգործությունը պայմանագրերի վրա:
33. Միջազգային կազմակերպությունների հասկացությունը, դասակարգումը և դերն ու նշանակությունը միջազգային համակարգում:
34. Միջազգային կազմակերպությունների առաջացման պատմությունը: Միջազգային վարչական միություններ, Ազգերի լիգա, Միավորված ազգերի կազմակերպություն:
35. Միջազգային կազմակերպությունների իրավաբանական բնույթը, նրանց իրավասությունը և լիազորությունները:
36. Միջազգային իրավասութայնությունը և պայմանագրային իրավունակությունը:
37. Միջազգային կազմակերպություններին կից պետությունների ներկայացուցչությունները:
38. Միջազգային կազմակերպություններին անդամակցելու և դուրս գալու կարգը, անդամությունից հեռանալու և անդամությունը կասեցնելու կարգը:
39. Միջազգային կազմակերպությունների մարմինները, նրանց ձևավորումը, լիազորությունները և գործունեությունը:
40. ՄԱԿ-ի կանոնադրությունը, նպատակները և սկզբունքները:
41. ՄԱԿ-ին անդամակցելը: ՄԱԿ-ի գլխավոր մարմինները:
42. ՄԱԿ-ի մասնագիտացված հաստատությունները:
43. Տարածաշրջանային միջազգային կազմակերպություններ:
44. Միջազգային իրավական պատասխանատվության հասկացությունը, ծագումը և զարգացումը:
45. Միջազգային իրավախախտում. հասկացությունը, դասակարգումը (միջազգային հանցագործություններ, միջազգային բնույթի քրեական հանցագործություններ, այլ միջազգային հանցագործություններ՝ դելիկտներ): Մեղք: Պատճառական կապ:
46. Պետությունների միջազգային իրավական պատասխանատվության տեսակները և ձևերը:
47. Պետությունների նյութական պատասխանատվություն:
48. Պատասխանատվություն իրավազոր գործունեության համար որպես պատասխանատվության հատուկ տեսակ:

49. Ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվությունը:
50. Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հասկացությունը, նրա աղբյուրները:
51. Պետությունների արտաքին հարաբերությունների ներպետական և արտասահմանյան մարմինները:
52. Հայաստանի Հանրապետության օրենքը «Դիվանագիտական ծառայության մասին» (24 հոկտեմբերի 2001թ.):
53. Հայաստանի Հանրապետության օրենքը «Հյուպատոսական ծառայության մասին» (29 մայիսի 1996թ.):
54. Դիվանագիտական ներկայացուցչություն. հասկացությունը, կազմը, գործառույթները և լիազորությունը: Դիվանագիտական ներկայացուցչության գլուխը: Նրա նշանակման, հետ կանչման և լիազորությունների դադարեցման կարգը:
55. Դիվանագիտական ներկայացուցչության աշխատողների դիվանագիտական արտոնությունները և իմունիտետները:
56. Միջազգային կազմակերպություններին կից՝ պետությունների մշտական ներկայացուցչությունները: Նրանց գործառույթները, արտոնությունները և իմունիտետները:
57. Հյուպատոսական դասերը, հյուպատոսի նշանակման և հետկանչման կարգը: Հյուպատոսական արտոնություններ և իմունիտետներ:
58. Միջազգային անվտանգության իրավունքի հասկացությունը:
59. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գործողությունները խաղաղության սպառնալիքի, խաղաղության խախտման և ագրեսիայի ակտերի դեպքում: ՄԱԿ-ի շրջանակներից դուրս բազմազգ զինված ուժերը:
60. Մարդու իրավունքների բնագավառում պետությունների համագործակցությունը:
61. Կանանց և երեխաների իրավունքների հատուկ պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերը:
62. Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ընդհարումների ժամանակ:
63. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմները: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ինստիտուցիաները:
64. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կազմավորման կարգը և կառուցվածքը: Դատարանի իրավազորությունը:
65. Միջազգային բնույթի քրեական հանցագործությունների առանձին տեսակները:
66. Քրեական գործերով իրավական օգնությունը: Իրավական օգնության մասին երկկողմ պայմանագրերը:
67. Հռոմի միջազգային քրեական դատարանը. կառուցվածքը, կազմը, իրավազորությունը և գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:
68. Միջազգային տնտեսական հարաբերությունների հասկացությունը և սուբյեկտները:
69. Հատուկ սկզբունքները միջազգային առևտրում (առավել բարենպաստման, փոխադարձության, ազգային և մյուս ռեժիմները):
70. Տարածքի նշանակությունը միջազգային հարաբերություններում: Տարածքի տեսակները. պետական տարածք, միջազգային ռեժիմով տարածքներ, խառը ռեժիմով տարածքներ:
71. Պետական տարածքի հասկացությունը, բաղկացուցիչ մասերը: Պետական տարածքի իրավաբանական բնույթը:
72. Պետական սահմաններ: Սահմանների դեմիլիտացիա և դեմարկացիա: Սահմանների ռեժիմի մասին պայմանագրերը: Սահմանային գետերը և լճերը: Հայաստանի Հանրապետության օրենքը «Պետական սահմանի մասին» (20 նոյեմբերի 2001 թ.):

73. Միջազգային գետեր:
74. Անտարկտիկայի միջազգային ռեժիմը: Անտարկտիկայի մասին 1959թ. պայմանագիրը:
75. Միջազգային ծովային իրավունքի հասկացությունը, սկզբունքները և աղբյուրները:
76. Ծովային տարածությունների դասակարգումը:
77. Միջազգային նեղուցներ. հասկացությունը, տարանցիկ անցման ռեժիմը:
78. Սևծովյան և Բալթյան նեղուցների իրավական վիճակը:
79. Միջազգային օդային իրավունքի հասկացությունը:
80. Միջազգային օդային իրավունքի աղբյուրները: Չիկագոյի միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944 թ. կոնվենցիան:
81. Միջազգային օդային իրավունքի հիմնական սկզբունքները:
82. Միջազգային տիեզերական իրավունքի հասկացությունը, աղբյուրները և առարկան:
83. Միջազգային տիեզերական իրավունքի օբյեկտները և սուբյեկտները:
84. Միջազգային տիեզերական իրավունքի հիմնական սկզբունքները:
85. Տիեզերական տարածության և երկնային մարմինների իրավական ռեժիմը:
86. Խաղաղ միջոցները որպես պետությունների վեճերի և տարաձայնությունների լուծման միակ օրինական եղանակ: Քաղաքական և իրավաբանական վեճեր:
87. Անմիջական բանակցությունները և խորհրդակցությունները որպես միջազգային վեճերի լուծման հիմնական միջոցներ: Բանակցությունները միջազգային կազմակերպությունների շրջանակներում:
88. Միջազգային հաշտարար ընթացակարգ: Բարի ծառայություններ, միջնորդություն, քննչական և համաձայնեցնող հանձնաժողովներ:
89. Միջազգային միջնորդ դատարան (արբիտրաժ): Հաագայի միջնորդ դատարանի մշտական պալատը:
90. ՄԱԿ-ի միջազգային դատարանը, կազմը, լիազորությունը, ենթադատությունը, գործերի քննության ընթացակարգը, որոշումները, պրակտիկ գործունեությունը:
91. Միջազգային զինված ընդհարումների և միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների հասկացությունը: Չինված ուժերի իրավազոր կիրառման հնարավորությունը (ինքնապաշտպանություն, ազգային ազատագրական պատերազմ, ՄԱԿ-ի զինված ուժերի կիրառում):
92. Պատերազմի սկիզբը և դրա իրավական հետևանքները: Պատերազմի թատերաբեմ: Պատերազմի մասնակիցները: Հրահանգիչներ և խորհրդականներ:
93. Պատերազմի վարման արգելված միջոցները:
94. Պատերազմի ընթացքում անձի իրավունքների պաշտպանությունը:
95. Ռազմագերիների իրավական վիճակը:
96. Քաղաքացիական բնակչության և ոչ ռազմական օբյեկտների պաշտպանությունը: Ռազմական օկուպացիա:
97. Պատերազմի ավարտը և դրա միջազգային իրավական հետևանքները: Չինադադարը, անձնատուր լինելը: Պատերազմական վիճակի դադարումը:

Իրավագիտության ամբիոնի վարիչ՝

Ա.Եզեկյան

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) հիմնական գրականություն

1. Միջազգային իրավունք, Վիգեն Քոչարյան, Երևան, 2002:
2. Միջազգային իրավունք: Պատասխանատու խմբագիրներ. Յու.Մ. Կոլոսով և Վ.Ի. Կուզնեցով: Գրքի հայերեն թարգմանության մասնագիտական խմբագիր Վ. Հովհաննիսյան: Երևան, 1996թ.:
3. Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Փաստաթղթերի ժողովածու: Պաշտոնական հայերեն թարգմանություն: «Տիգրան մեծ» հրատարակչություն, Երևան 2001 թ.:
4. Международное право / учебник для вузов в двух томах / Лукашук И. И., Москва, 2004.
5. Antonio Cassese, International Law, Oxford University Press, 2005.

բ) լրացուցիչ գրականություն

1. Ушаков Н.А., Международное право, учебник, М., 2000.
2. Курс международного прав, в семи томах, М., 1989-1998гг.

գ) էլեկտրոնային աղբյուրներ

1. www.un.org
2. www.icj-cij.org
3. www.icrc.org
4. www.icc-cpi.int
5. echr.coe.int